

ՀՀ ԳԱԱ. Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2013, 66, № 3, 15-23

ԱԿՆԱՐԿ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

© 2013 Ա. Ավանեսյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների խնաժիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24ա, ՀՀ
E-mail: ashavan48@mail.ru
Հանձնված է խմբագրություն 28.06.2013թ.

Հոդվածի նպատակն է ներկայացնել մասնագիտական հասարակությանը երկրաբանական քարտեզագրման պատմությունը Հայաստանում և նրա կարևոր դերը մեր տարածաշրջանի բարդ երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման ու պատկերման գործում: Հիշատակվում են բոլոր հիմնական երկրաբանական քարտեզահանման աշխատանքները և քարտեզները, որոնք պահպանվում են Հանրապետական երկրաբանական ֆոնդում և երկրաբանական գիտությունների խնաժիտությունը գրադարանում, որոնցից անհրաժեշտ է օգտվել տարբեր կիրառական և գիտական խնդիրները լուծելիս:

Նախաբան. Լավ և գրագետ կազմված երկրաբանական քարտեզը նման է գրավիչ գրքի, որը ընթերցելիս կարելի է ստանալ չափանից կարևոր և հետաքրքիր տեղեկություններ քարտեզի վրա պատկերված տարածքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ: Երկրաբանական քարտեզում պատկերված շերտագրության, քարաբանության, հրայնության, տեկտոնիկայի և այլ տվյալների վերլուծության հիման վրա երկրաբանները ստանում են անհրաժեշտ տեղեկություններ հետազոտվող տարածքի տեկտոնական զարգացման և ձևավորման մասին՝ տարածքի երկրաբանական կառուցվածքը, վաղ երկրաբանական անցյալում գոյություն ունեցած հնաշխարհագրական, լանդշաֆտային, կիմայական պայմանները, կենդանական և բուսական աշխարհը, ինչպես նաև երկարատև երկրաբանական զարգացման պատմության ընթացքում տեղի ունեցած տարբեր երկրաբանական երևույթները՝ ծովայինից ցամաքային ռեժիմի անցումը, ծալքա- և լեռնաառաջացումը, հրաբուխների արտավիժումը, աղետաբեր երկրաշարժերը, սողանքները և այլ բնական աղետներ:

Երկրաբանական քարտեզից տվյալներ են ստանում հետազոտվող շրջանում տարածված տարաբնույթ օգտակար հանածոների, նրանց բաշխման օրինաչափությունների և նոր տեսակների ու հանքավայրերի հայտնաբերմանն նախադրյալների մասին: Ըստ էության միայն գրագետ տարամասշտաբ երկրաբանական քարտեզները, որոնք կազմված են բոլոր պահանջներին համապատասխան, կարող են վստահելի հիմք ծառայել այս կամ այն տարածքներում որոնողական ու երկրաբանահետախուզական աշխատանքների կազմակերպման, նոր օգտակար հանածոների հայտնաբերման հեռանկարների գնահատման և ի վերջո երկրի համար

վստահելի հանքահումքային հենքի ստեղծման համար: Երկրաբանական քարտեզները նաև հիմք են հանդիսանում ջրաերկրաբանական և ինժեներա-երկրաբանական քարտեզների համար, առանց որոնց հնարավոր չէ քաղաքների, բնակավայրերի, կարևոր օբյեկտների և ձեռնարկությունների ջրամատակարարման ապահովումը, շինարարության նախագծումն ու իրականացումը, սեյսմիկ պայմանների գնահատումը:

Երկրաբանական քարտեզագրության պատմության համառոտ ակնարկ

Ինչպես աշխարհի շատ տեղամասերում, այնպես ել պատմական Հայաստանի տարածքում երկրաբանական քարտեզագրման տարրերն ի հայտ են եկել հնագույն քաղաքակրթություններում: Արդէն իսկ այդ ժամանակներում սկսեցին զարգանալ արհեստներ՝ կապված աղի, հանքային ներկերի, թանկարժեք ու գունազարդ քարերի, օբսիդիանի, կայծքարերի, շինանյութերի, պղնձի, երկարի և այլ անհրաժեշտ օգտակար հանածոների որոնման և շահագործման հետ: Երկրաբանական քարտեզագրման տարրերի գիտելիքները կուտակվում էին "հանքագետների" կողմից և փոխանցվում էին սերնդից սերունդ, սակայն նրանց գոյության մասին գրավոր վկայություններ հանդիպում են չափազանց հազվադեպ:

Հայտնի քարտեզներից առաջինը (ըստ Բ.Վիտոցկու), որի վրա պայմանական նշաններով պատկերված է ապարների և միներալների տարածումը, կազմվեց Կովոնի կողմից Ֆրանսիայում 1644թ: Անգլիացի Լիստերը 1684թ. առաջարկեց քարտեզի վրա տարրեր գույներով նշել ապարների տարատեսակները: Անգլիայում, 1743թ. Ուկսը կազմեց քարտեզ, որի վրա տարածված ապարները նշված են եղել գույներով և տառային նշաններով, քարտեզին կցվում էր պայմանական նշանների բացատրությունը: Նույն թվականին ֆրանսիացի Գետտերը հրատարակեց Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի «գեղոգնոստիկ» քարտեզը պատկերելով նրա վրա ապարների, հանքաքարերի և հանքային աղբյունների տարատեսակները: Ռուսաստանում (Եթե հաշվի չառնենք հանքային տեղամասերի հին "նկարագրերը" և հատակագծերը) առաջին երկրաբանական քարտեզներից մեկը հանդիսանում է Արևելյան Անդրբայկալիայի ձեռագիր "գեղոգնոստիկ" (Երկրաբանա-ապարագրական) քարտեզը (մ-բը $\approx 1:20000$), որը կազմվել է Դ.Լեբեդեվի և Ս.Իվանովի կողմից:

Իսկական երկրաբանական քարտեզները, կազմված շերտագրության հիմքերի վրա, սկսեցին ի հայտ գալ միայն XIX դարի սկզբում: Շերտագրության հիմքում դրվեցին այդ ժամանակում մշակված սկզբունքները՝ 1 - երկրաբանական մարմինների հաջորդական առաջացման (Ն.Ստենոն, 1669թ.). 2 - կենսաշերտագրական մասնատման և համարման (Ու.Սմիտի, 1816թ.). 3 - միահասակ նստվածքների ֆացիալ տարանշատման (Ա.Գրեսլի, 1838թ.; Է.Ռե-

նեվել, 1884թ.). 4 – ակտուալիզմի (Զ.Լայել, 1830 - 1833թ.թ.). 5 – ոչ լրիվ շերտագրական և հնեաբանական տարեգրության (Զ.Դարվին, 1859թ.). 6 – էվոլյուցիաի երկրաբանական և կենսաբանական անդարձելիության (Զ.Դարվին, 1859թ.; Լ.Ռոլլը 1893թ.). 7 – հնեաբանական սուկցեսսիայի սկզբունքը (Ժ. Սուլավու, 1780թ.; կամ Ու. Սմիտ, 1816թ.): Ավելի ուշ սկսվեց կիրառվել նաև երկրաբանական մարմինների սահմանային մակերեսների հասակային միզրացիայի սկզբունքը (Ն. Գոլովկինսկի, 1868թ.):

Երկրաբանական քարտեզագրման զարգացման նոր խթան ծառայեց 1875թ. Միջազգային երկրաբանական համաժողովի կայանալը: Համաժողովի առաջին նստաշրջանում 1878թ. դրված են եղել մրցութային հարցեր՝ երկրաբանական քարտեզագրման, տարբեր ստվարաշերտերի նշանների միասնական անվանակարգի և երկրաբանական քարտեզների համար միասնական նշանների համակարգի, երկրաբանական համակարգերի մասնատման համար բրածո կենդանիների նշանակության, ապարների սահմանազատման հնարավորության ըստ նրանց լիթոլոգիական կազմի, շերտագրական սինէմանների կարգման, երկրաբանական քարտեզների վրա կողաշարժերի ու երակների նշանակման եղանակների վերաբերյալ:

Հայկական լեռնաշխարհի առաջին երկրաբանական սինէմատիկ քարտեզներն ի հայտ եկան 19-րդ դարի վերջին տարիներին: Այդ ժամանակարնթաքում Հերման Աբիկսի (1844-1882) կողմից իրականացվեցին հետազոտություններ նվիրված երկրամասի երկրաբանությանն ու լեռնագրությանը: Աշխատանքները ամփոփվել են երեք հրատարակություններում և ուղեկցվում էին տարամասշտար երկրաբանական քարտեզներով և սինէմաններով, հետաքրքիր ուրվանկարներով ու պատկերներով: Ամփոփիչ աշխատանքի երրորդ մասը, որը պարունակում էր տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի վերաբերյալ, հրատարակության պատրաստվեց է. Զյուսի կողմից և լուս տեսավ 1887թ. Գ.Աբիկսի մահից հետո: Հատորին որպես հավելված կցվում էր բազմավալ ատլասը, որում հավաքված էին Մեծ և Փոքր Կովկասի բազմաքանակ հետաքրքիր ուրվանկարներ, կտրվածքներ և երկրաբանական քարտեզներ: Հատուկ հետաքրքրություն էին ներկայացնում վերջիններս, և նրանց շարքում Հայաստանի 1:420000 (10 վերսոր մեկ ոյույնում) երկրաբանական քարտեզը, որի վրա գունային պայմանական նշաններով ցույց էին տրված 28 տարբեր շերտագրական միավորներ ու ապարներ: Այդ ժամանակի համար քարտեզը տալիս էր Փոքր Կովկասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների մասին բավականին լավ պատկերացումներ:

Տ.Օսվալդի (1906) Հայկական լեռնաշխարհի երկրաբանական քարտեզները հանդիսացան 20-րդ դարի սկզբի տարիներում տարբեր հետազոտողների աշխատանքների արդյունքում կուտակված երկրաբանական նյութերի տաղանդավոր ամփոփում:

Սկսած 1923 թվականից, ներառյալ 1942թ., ընդմիջումներով 1928, 1933 և 1934թթ. Կ.Պաֆենգոլցի կողմից կատարվեց Փոքր Կովկասի, այդ թվում և Հայաստանի տարածքի մոտ 70% պլանաշափ 1:420000 և 1:100000 ու երթուղային 1:200000 մասշտաբների երկրաբանական հանույթ: Կազմվեցին միջին մասշտաբի (1:200000) երկրաբանական քարտեզներ: Հայաստանի առանձին տարածքներում, գլխավորապես Ալավերդու ու Կապանի հանքային շրջաններում, այդ տարիներին ուրիշ երկրաբանների կողմից (Համամիութենական Երկրաբանական Ինստիտուտ, Լենինգրադ) կազմվեցին խոշորամասշտաբային (1:42000) երկրաբանական քարտեզներ: Վ.Գրուշևոյի (1937, 1948թթ.), Վ.Կոտյարի (1937թ.), Ս.Ն.Մոլովկինի (1936թ.), կողմից կազմվեցին 1:100000 և 1:200000 մասշտաբին համապատասխանող Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասի՝ Զանգեզուրի հանքաբեր մարզի երկրաբանական քարտեզները:

50-ական թվականներին Ա.Ասլանյանը (1950թ.) կազմեց մերձերևանյան տարածաշրջանի և Արարատյան հարթավայրի (մոտ 6000 քառ.կմ) 1:100000 մասշտաբի երկրաբանական քարտեզը Ա.Առաքելյանի աշխատանքների արդյունքում 1953թ. կառուցվեց Ուրծ-Հայոցձորի լեռնաշղթայի (մոտ 1600 քառ.կմ.) 1:100000 մասշտաբի երկրաբանական քարտեզը Ս.Մկրտչանը (1953թ.) ստեղծեց Զանգեզուրի հանքաբեր մարզի (մոտ 4000 քառ.կմ.) 1:100000 երկրաբանական քարտեզը:

Նույն թվականներին սկսվեցին Հայաստանի մի շարք շրջանների խոշորամասշտաբ (1:50000) երկրաբանահանույթային աշխատանքները՝ կազմվեցին Փամբակի լեռնաշղթայի կենտրոնական մասի, Հայոցձորի լեռնաշղթայի, Ստեփանավանի շրջանի արևմրտյան մասի, Լալվար և Լեջան լեռնազանգվածների (Պ.Եփրեմյան, 1949-1956թթ.), Շամշադինի (Ս.Ավանեսյան, 1949թ.), Կապանի հանքային շրջանի (Գ.Տեր-Մերոպյան, 1950թ.) 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզները:

1956թ. հրատարակվեց Կ.Պաֆենգոլցի կողմից ճշգրիտ տեղագրական հիմքի վրա ստեղծված Կովկասի 1:500000 մասշտաբի երկրաբանական քարտեզը, որն արժանացավ միջազգային երկրաբանական կոմիտեի մրցանակի: Նույն մասշտաբի Կովկասի երկրաբանական քարտեզ ամփոփային հիմունքներով Դ.Նալիվկինի խմբագրությամբ հրատարակվեց 1976թ.:

20-րդ դարի երկրորդ կեսերին, հայ երկրաբանների մի ամբողջ համաստեղության (Կ.Մկրտչյան, Գ.Հակոբյան, Հ.Չուբարյան, Զ.Չովհաննիսյան, Վ.Ամարյան, Ա.Վեհունի, Վ.Սաֆարյան, Հ.Թումանյան, Ռ.Խաչատրյան, Ս.Մարտիրոսյան և այլք) աշխատանքների շնորհիվ խոշորամասշտաբ (1:50000) երկրաբանական հանույթով ծածկվեց Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Կազմվեցին Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասի (Հ.Չուբարյան 1969թ., 1970-1975թթ.; Հ.Թումանյան և ուրիշներ, 1964-

1966թ., 1969-1970թթ.; Գ.Հակոբյան և ուրիշներ, 1962-1969թթ.), Արագածի հրաբխային զանգվածի (Վ.Ամարյան, 1965-1972թթ.), Սևանի լեռնաշղթայի (Հ.Չուբարյան և ուրիշներ, 1970-1975թթ.), Վեդի և Արփա միջնագետքի (Ա.Վեհունի, Ռ.Խաչատրյան, 1960-1963թթ.), Միսիանի շրջանի (Զ.Հովհաննիսյան, Վ.Ամարյան, 1969-1971թթ., Վ.Սաֆարյան 1972-1975թթ.), Հրազդան գետի միջին ավազանի (Զ.Հովհաննիսյան, 1962թ.) պահանջվող որակի (կոնդիցիոն) երկրաբանական քարտեզներ, որոնք հիմք հաղիսացան այդ տարածքների օգտակար հանածոների քարտեզների կազմմանն ու հետագա որոնողական և երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծմանը:

Նոյն ժամանակաշրջանում Հայաստանի ԽՍՀ գիտությունների ակադեմիայի և ԵՊՀ-ի գիտնականների կողմից գիտահետազոտական և թեմատիկ աշխատանքների շրջանակներում կազմվեցին Սևանի հյուսիս-արևելյան ափի (Ս.Աբովյան, 1961թ.), Զանգեզուրի հարավ-արևելյան մասի (Վ.Հակոբյան, 1962թ.), Վեդի գետի վերին հոսանքի ավազանի (Վ.Ավետիսյան, Ն.Ազարյան և ուրիշներ, 1963թ.), Երևանի երկրաբանա-տնտեսական շրջանի (Վ.Ավետիսյան, Վ.Հակոբյան և ուրիշներ, 1964-1970թթ.), Մեղրու ներժայթքային պլուտոնի (Հ.Աղամյան, Ա.Վեհունի, 1959թ.) 1:50000 մասշտարի երկրաբանական քարտեզներ: Մեծածավալ և բազմամյա երկրաբանական գիտահետազոտական ուսումնասիրություններ իրականացվեցին Զանգեզուրի հանքային շրջանում, ինչի արդյունքում կառուցվեցին Քաջարանի, Ազարակի և ուրիշ հանքային դաշտերի մանրամասն և խոշորամասշտար (1:2000, 1:5000, 1:25000) ու ամբողջ հանքային շրջանի (1:50000) երկրաբանակառուցվածքային քարտեզներ (Կ.Քարամյան, Ռ.Տայան, Ռ.Ջրբաշյան, Հ.Գույումջյան, Մ.Հարությունյան, Ռ.Սարգսյան և ուրիշներ, 1969-1978թթ.): Թվարկված աշխատանքները շատ մեծ կիրառական նշանակություն ունեցան ինչպես երկրաբանառոնողական և հետախուզական աշխատանքներում, այնպես էլ ժողովրդական տնտեսության այլ ոլորտներում:

Երևան քաղաքի և նրա մերձակայքի կառուցապատման ու զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ այս տարածքի 1:25000 մասշտարի հրատարակված երկրաբանական քարտեզը (Ա.Ասլանյան, Յու.Սայայան, Կ.Կարապետյան, 1982թ.)

1964-1970թթ. ՀԽՍՀ երկրաբանական վարչության աշխատակիցների կողմից Մեղրու ներժայթքային պլուտոնի և հարակից տարածքների սահմաններում իրականացվեցին երկրաբանառոնողական աշխատանքներ, որոնք ուղեկցվեցին 1:50000 մասշտարի երկրաբանական հանույթով (Գ.Խոջաբաղյան, Ռ.Հարությունյան և ուրիշն., 1971թ.): Քարտեզին կից բերվեցին բազմաթիվ հավելվածներ վրադիր քարտեզների տեսքով, որոնց վրա պատկերված էին այդ շրջանում բացահայտված բազմատեսակ օգտակար հանածոների

ուղակի և կողմնակի (Միներալոգիական, Երկրաքիմիական, Երկրաֆիզիկական և այլն) նախադրյալները:

Հայաստանի Երկրաբանական կառուցվածքում զգալի դեր են խաղում նորագույն, պլիոցեն-չորրորդական հասակի հրաբուխները և հրաբխային առաջացումները: Նրանք ծածկում են Զավախիքի, Ծաղկունյաց, Գեղամա, Վարդենիսի լեռների բարձրադիր մասերը և լանջերը, Արագածի լեռնային զանգվածն ու Սյունիքի բարձրավանդակը: Կատարվեցին նորագույն հրաբխականության տարածման շրջանների բազմամյա (1960-1980թթ.) մանրագննին Երկրաբանա-ապարաբանական հետազոտություններ, որոնք ուղեկցվում էին այդ տարածքների խոշորամասշտար 1:25000, 1:100000 և 1:200000 մասշտաբի Երկրաբանա-ապարագրական քարտեզներով և սխեմաներով՝ Արագածի շրջան (Կ.Շիրինյան, Ս.Կարապետյան, Յու.Ղուկասյան և ուրիշներ, 1969-1974թթ.), Զավախիքի լեռներ և Ախուրյան գետի վերին հոսանք (Է.Խարազյան, 1968թ.), Ծաղկունյաց լեռներ (Է.Խարազյան, Ս.Կարապետյան, 1975թ.), Գեղամա բարձրավանդակ (Կ.Կարապետյան, Ս.Կարապետյան, 1965-1969թթ.), Սյունիքի բարձրավանդակ, Կապանի շրջան (Ս.Կարապետյան, Կ.Շիրինյան, Լ.Նահապետյան և ուրիշներ, 1969-1974թթ.), Վարդենիսի լեռնաշղթա (Ս.Հ.Կարապետյան, Է.Խ.Խարազյան, 1976-1980թթ.): Հետազայում այս քարտեզները և ստացված տվյալները ճշտգրուվեցին ու ամփոփվեցին թվայնացված նորագույն պլիոցեն-չորրորդական հրբախականության քարտեզներում՝ ՀՀ տարածքի 1:500000 (Ռ.Ջրբաշյան, Ս.Կարապետյան, Յու.Ղուկասյան, Է.Խարազյան, 2007թ.), Արագածի հրաբխային զանգվածի 1:100000 (Յու.Ղուկասյան, Խ.Մելիքսեթյան, Ռ.Ջրբաշյան, Գ.Նավասարդյան, 2010թ.), Գեղամա և Վարդենիսի բարձրավանդակների 1:100000 (Ս.Կարապետյան, Ռ.Ջրբաշյան, Գ.Նավասարդյան, 2011թ.), Սյունիքի բարձրավանդակի 1:100000 (Ս.Կարապետյան, Ռ.Ջրբաշյան, Գ.Նավասարդյան և ուրիշներ, 2011թ.):

Գիտահետազոտական ուսումնասիրությունների հիման վրա կազմվեց 1:50000 մասշտաբի Արգականի բյուրեղային զանգվածի թերթաքարային համալիրի Երկրաբանա-ապարաբանական քարտեզը (Վ.Աղամայյան, 1969թ.):

Երկրաբանական քարտեզագրման աշխատանքները Հայաստանում նոր թափ ստացան 20-րդ դարի 80-ական թվականների վերջում: Ենելով որակի նկատմամբ նոր պահանջներից և կանխատեսումային-մետաղածնական քարտեզների կազմման խնդիրներից, Հայաստանի տարբեր հանքային և Երկրաբանա-տնտեսական շրջանների սահմաններում կատարվեցին խմբակային և մասնագիտացված Երկրաբանական խոշորամասշտար (1:50000 մասշտաբի) հանութային աշխատանքներ: Կազմվեցին Ստեփանավանի (Ա.Շմիդտ, Վ.Շողով, Ա.Ավանեսյան, Վ.Աղամալյան և ուրիշներ, 1978թ., 900 քառ.կմ.) և Շամշադինի (Ա.Շմիդտ, Ա.Ավանեսյան, Ա.Պորտնյ և ուրիշներ 1982թ., 1100 քառ.կմ.) հանքային շրջանների

Երկրաբանական և կառուցվածքաֆորմացիոն (1:50000) քարտեզները: Ստեղծվեցին Վայոց Ձորի և Հարավային Սևանի երկրաբանատնտեսական շրջանի (5200քառ.կմ.) խոշորամասշտաբ (1:50000) երկրաբանական և օգտակար հանածոների քարտեզները (Ա.Մարտիրոսյան, Վ.Ամարյան և ուրիշներ 1981թ.): 1982-1983թթ. Է.Խարազյանը, Ռ.Սահարյանը և այլոք քարտեզագրեցին Բազումի և Փամբակի լեռնաշխտթաների արևմտյան մասերը (Է.Խարազյան և ուրիշներ, 1983թ.): Կազմվեց Կապանի հանքային շրջանի երկրաբանական-կառուցվածքային 1:50000 մասշտաբի քարտեզը, շեշտը դնելով հիմնականում երկրաբանական ֆորմացիաների առանձնացման վրա (Ա.Աչիկյանը, Ս.Զոհրաբյան և ուրիշներ, 1981թ.): 1982-1985թթ. կազմվեցին Կապանի ու Սիսիանի հանքային շրջանների 1:50000 մասշտաբի (Ե.Ուսպենսկայա, Է.Յլեվեն, Ա.Ավանեսյան և ուրիշներ, 1985թ., Ե.Ուսպենսկայա, Լ.Քուրշտեյն և ուրիշներ, 1987թ.,) և Կապանի հանքային դաշտի 1:25000 մասշտաբի (Ա.Շմիդտ, Ա.Պորտնոյ և ուրիշն., 1985թ.) երկրաբանական և կառուցվածքային-ֆորմացիոն քարտեզները: Նույն տարիներին մի շարք երկրաբանների կողմից կազմվեց և 1989թ. հանձնվեց հարավային Զանգեզուրի 1:50000 մասշտաբի կոնդիցիոն երկրաբանական քարտեզը (Է.Խարազյան, Բ.Մելքոնյան և ուրիշներ, 1989թ.):

Ամփոփելով և վերլուծելով Հայաստանի տարբեր տարածաշրջանների խոշորամասշտաբ երկրաբանական հանույթների տվյալները, 1975-1985թթ. պետական հրատարակման նախապատրաստվեցին ԽՍՀՄ-ի Կովկասյան սերիայի 1:200000 մասշտաբի երկրաբանական և օգտակար հանածոների քարտեզները: Դրանցից մի մասը՝ K-38-XXVI (Ա.Ասլանյան, Ա.Վեհունի, 1975թ.), J-38-XI (Հ.Աղամյան, Ա.Վեհունի, 1975թ.), K-38-III (Ա.Վեհունի, Ռ.Խաչատրյան, 1981թ.) հրատարակվեցին, իսկ մյուս մասը՝ K-38-XXVIII (Հ.Չուբարյան և ուրիշներ, 1986թ.), K-38-XXXIII (Հ.Չուբարյան և ուրիշներ, 1989թ.), K-38-XXXIV (Հ.Չուբարյան և ուրիշներ, 1991թ.) շասցվեց հրատարակվել:

2005թ. Է.Խարազյանը իմի բերելով մեծաքանակ հեղինակների բազմածավալ երկրաբանական քարտեզների տվյալները, ինպես նաև օգտագործելով անձնական նյութերը և մոտեցումները, ստեղծեց և հրատարակեց ՀՀ տարածքի 1:500000 մասշտաբի երկրաբանական քարտեզը՝ թվայնացված տարբերակով, հայերեն և անգլերեն լեզուներով:

Վերջաբան. Ոեզիոնալ երկրաբանահանութային աշխատանքները ֆունդամենտալ հենք են ստեղծում հանքագետության երկրաբանության համակարգված ուսումնասիրման, ընդերքում օգտակար հանածոների հանքավայրերի կանխատեսման և հայտնաբերման համար: Նրանք կոչված են ապահովելու արդյունաբերության, գյուղատնտեսության տարբեր ոլորտները (երկրաբանահե-

տախուզական աշխատանքներ, լեռնային գործ, մելիորացիա, շինարարություն, պաշպանություն, ռացիոնալ բնօգտագործում, բնապահպանություն, սեյսմիկ վտանգ, հրաբխային ժայթքումներ և այլ ժամանակակից երկրաբանական գործընթացների կանխատեսում ու գնահատում) համակարգված երկրաբանական տեղեկատվությունով:

Երկրաբանական գիտությունների զարգացմանն ու ուսումնասիրություններին համընթաց ի հայտ են զալիս նոր տվյալներ և մեկնաբանություններ, որոնք արտահայտված չեն եղել նախկինում կատարված երկրաբանական քարտեզների վրա: Դետական երկրաբանական քարտեզների հնացման ժամկետը մասնագետների կողմից գնահատվում էր 15-20 տարի: Փորձագետների գնահատմամբ ՀՀ տարածքի երկրաբանական քարտեզների մոտ 50% չի համապատասխանում ժամանակակից պահանջներին և ենթակա է նորացման, հաշվի առնելով երկրակեղենի կառուցվածքի, կազմի և զագացման վերաբերյալ նոր պատկերացումների զգալի առաջընթացը:

Սկսած 1991թ. պետական երկրաբանական քարտեզագրումը դուրս է մնացել պետական ուշադրության շրջանակներից և իրականացվում է պատվերներով ի հաշիվ կոնկրետ ընդերքօգտագործողների միջոցների: Հարկ ենք համարում նշել, որ նախկինում բոլոր պետական երկրաբանական քարտեզները անցնում էին փորձագիտական քննություն մասնագիտական իմբագրական հանձնաժողովով՝ կազմված Հայաստանի անվանի գիտնականներից և փորձառու երկրաբաններից: Քարտեզները հաստավում էին Կառավարությանը կից երկրաբանական գերատեսչություններում (ՀԽՍՀ երկրաբանական վարչություն), կամ հատուկ լիազորված ինստիտուտներում (ՎԸԵԳԵԻ): Ներկայումս նման պրակտիկան, ցավոք բացակայում է:

Սույն հոդվածը նախապատրաստելիս հեղինակը հիմնականում օգտվել է Հանրապետական երկրաբանական ֆոնդում գոյություն ունեցող տվյալներից, ինչպես նաև իր գործընկերների կողմից սիրով տրամադրված նյութերից, որի համար շնորհակալություն է հայտնում:

Ցանկանում եմ նաև իմ երախտապարտությունը հայտնել ավագ սերնդի բոլոր անվանի և արտադրությունում աշխատած շարքային երկրաբաններին, որոնք թողել են իրենց անշնչելի հետքը Հայաստանի երկրաբանությունում:

Գրախոսողներ՝ Ռ.Միրիջանյան
Հ.Բաղդասարյան

ОЧЕРК РАБОТ ПО ГЕОЛОГИЧЕСКОМУ КАРТИРОВАНИЮ В АРМЕНИИ

А.С.Аванесян

Резюме

Целью статьи является представить профессиональной среде историю геологического картирования в Армении и ее важную роль в деле изучения и изображения сложного геологического строения нашего региона. Приводятся, по возможности, все основные геологосъемочные работы и карты, которые есть в Республиканском геологическом фонде и в библиотеке института геологических наук и, которыми необходимо пользоваться при решении различных прикладных и научных задач.

THE OVERVIEW OF WORKS ON THE GEOLOGICAL MAPPING IN ARMENIA

A. S. Avanesyan

Abstract

The purpose of the article is to present to the professional community the history of geological mapping in Armenia and the important role it played in the study and representation of the complex geological structure of our region. All main geological surveying works and maps that are available in the National Geology Foundation and in the Library of the Institute of Geological Sciences and should be used in resolving various applied and scientific tasks, are mentioned, to the extent possible.